ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1061-Ա 21 մարտի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 7149-Ա, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 665-Ա, 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 3405-Ա, 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 6654-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվերով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի 2024 թվականի փետրվարի 19-ի N Ն/7140-24 զեկուցագիրը.

1. Երևանի քաղաքապետի 2012 թվականի հունվարի 27-ի «Երևանի քաղաքապետի մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 665-Ա որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով հաստատված՝ N 4 հավելվածը (ծածկագիր՝ 1.3-51) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 7149-Ա որոշման 1-ին կետի 1.13-րդ ենթակետով հաստատված 109-րդ (ծածկագիր՝ 2.1-13), 110-րդ (ծածկագիր՝ 2.3-31), 111-րդ (ծածկագիր՝ 3.1-18), 112-րդ (ծածկագիր՝ 3.2-17), 113-րդ (ծածկագիր՝ 3.2-18), 114-րդ (ծածկագիր՝ 2.1-14), 115-րդ (ծածկագիր՝ 2.3-32), 116-րդ (ծածկագիր՝ 2.3-33) հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2-9 հավելվածների:

3. Երևանի քաղաքապետի 2019 թվականի սեպտեմբերի 20-ի «Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի հ. 7149-Ա, 2011 թվականի ապրիլի 21-ի հ. 1468-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 3-ի հ. 6133-Ա, 2017 թվականի հուլիսի 11-ի հ. 2359-Ա որոշումներով հաստատված հավելվածները ուժը կորցրած ճանաչելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 3405-Ա որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով հաստատված N 9 (ծածկագիր՝ 2.1-180), N 10 (ծածկագիր՝ 2.3-471), N 11 (ծածկագիր՝ 2.3-472), N 12 (ծածկագիր՝ 2.3-473), N 13 (ծածկագիր՝ 3.1-437), N 14 (ծածկագիր՝ 3.1-438), N 15 (ծածկագիր՝ 3.1-439), N 16 (ծածկագիր՝ 3.1-440), N 17 (ծածկագիր՝ 3.2-566), N 18 (ծածկագիր՝

3.2-567), N 19 (ծածկագիր՝ 3.2-568) հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 10-20 հավելվածների:

4. Երևանի քաղաքապետի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 6654-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 8 հավելվածը (ծածկագիր՝ 3.2-548) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 21 հավելվածի:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ